ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2013 թվականի N 8-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի դրույթներով և համաձայն Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի գրավոր առաջարկության, որոշում եմ՝

1. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Գորիսի տարածքային գործակալությունում ուսումնասիրություն կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Փիրյան Արտյոմ	-	մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (խմբի ղեկավար)
Ղազարյան Ռաֆիկ	-	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ
Արզումանյան Վահրամ	-	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ:

2. Աշխատանքային խմբին. 2014թվականի փետրվարի 1-ից մինչև 11-ը Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Գորիսի տարածքային գործակալությունում կատարել ուսումնասիրություն համաձայն աուդիտորական հանձնարարականի (կցվում է):

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. հունվարի 29
ք. Կապան

հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի

2014թ հունվարի 29-ի N 8-Ա որոշման

Հանձնարարական

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2014թ հունվարի 29-ի N 8-Ա որոշման և Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի 2014թ աշխատանքային ծրագրի, Հանձնարարում եմ

1.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների Գորիսի տարածքային գործակալությունում ուսումնասիրություն կատարել 2013թ ընթացքում գործակալության իրականացրած պետական նպաստների նշանակման և գործունեությանն առնչվող այլ պայմանների համապատասխանությունը օրենսդրության պահանջներին:
2.Ուսումնասիրության նպատակը՝ հավաստի տեղեկատվության տրամադրում մարզպետին:
3.Ուսումնսիրությունը սկսել 2014թ փետրվարի 1-ին և ավարտել փետրվարի 11-ին:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ.Հակոբյան

Ծանոթացա՝ սոցիալական ծառայությունների Գորիսի տարածքային գործակալության պետ

---------- Արա Միքայելյան

<<------ >> ---------- 2014թ